

«ՄԵՏԷՔՍԻՄ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ
ԲԱՆԵՑՎԱԾ ԿԱՊԱՐԱԹՎԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ
ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՎԵՐԱՊՐՈՖԻԼԱՎՈՐՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կապիտալ
«Բնակարգ» ՍՊԸ տնօրեն՝
Ս. Թևոյան



ԵՐԵՎԱՆ – 2025

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	4
1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ _____	4
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՆ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	7
2.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները _____	7
2.2. Ռելիեֆ և երկրաբանություն _____	8
2.3. Տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները _____	9
2.4. Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները _____	9
2.5. Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները _____	10
2.6. Կլիմա _____	10
2.7. Տարածքի սելսմիկ բնութագիրը _____	14
2.8. Մթնոլորտային օդ _____	14
2.9. Ջրային ռեսուրսներ _____	15
2.10. Հողային ռեսուրսներ _____	17
2.11. Կենսաբազմազանություն _____	18
2.11.1. Տարածաշրջանի բուսական աշխարհը _____	19
2.11.2. Տարածաշրջանի կենդանական աշխարհը _____	20
2.12. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ _____	20
2.13. Պատմության և մշակութային հուշարձաններ _____	22
2.14. Սոցիալ-տնտեսական պայմանները _____	22
3. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅՆ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ _____	24
3.1. Զրոյական տարբերակ _____	24
3.2. Քննարկվող տարբերակներ _____	24
3.3. Ընտրված տարբերակի հիմնավորումը _____	26
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ _____	26
4.1. Ընդհանուր տեղեկատվություն _____	26
4.2. Նախատեսվող գործունեության նկարագիրը _____	30
4.2.1. Մետաղի ջարդոնի ընդունման, տեսակավորման և պահեստավորման տեղամասի նկարագիրը _____	30
4.2.2. Նախատեսվող ձուլման տեղամասի նկարագիրը _____	31
4.3. Տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը _____	31
4.3.1. Այլումին ջարդոնի հալում _____	31
4.3.2. Պղնձի և դրա համաձուլվածքների ջարդոնի վերահալում _____	34
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	38
5.1. Մթնոլորտային օդ _____	38

5.1.1. Մթնոլորտ վնասակար նյութերի աղբյուրների նկարագիրն ու արտանետումների հաշվարկը _____	38
5.1.2. <i>Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները</i> _____	44
5.2. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա _____	46
5.3. Աղմուկ և թրթռում _____	51
5.4. Հողածածկ _____	51
5.5. Կենսաբազմազանություն _____	52
5.6. Սոցիալական ազդեցությունը _____	52
5.7. Կլիմայական գործոններ _____	52
5.8. Առողջապահական գործոններ _____	53
5.9. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն _____	53
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ _____	53
7. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ _____	55
8. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ _____	57
9. ՀՆԱՐԱՎՈՐ ՏԵԽՆԱԾԻՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՔ ՄԵՂՄՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ _____	57
10. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ _____	59
11. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ _____	59
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ _____	61
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	64
<i>ՀԱՎԵԼՎԱԾ 1. Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկ</i> _____	19
<i>ՀԱՎԵԼՎԱԾ 2. Պետական ռեգիստրում գրանցման վկայական</i> _____	56

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր հոսքի կտրուկ

«ՄԵՏԷՔՄԻՄ» ՍՊԸ ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովա փողոց 15 հասցեում իրականացնում է մետաղների ջարդոնի ընդունման, տեսակավորման և վաճառքի գործունեություն: Նախկինում այս տարածքում ընկերությունը նաև իրականացնում էր բանեցված կապարաթթվային մարտկոցների ընդունում, մասնատում և հանված կապար պարունակող մնացորդի վերամշակում՝ ձուլման եղանակով, ստանալով ձուլակտորներ:

Ներկայում բանեցված կապարաթթվային մարտկոցների հոսքը կտրուկ պակասել է և ընկերությունը չի ընդունում մարտկոցներ և չի իրականացնում դրանց վերամշակման աշխատանքներ:

Տարածքում արտադրական գործունեությունը վերականգնելու նպատակով ընկերության ղեկավարությունը որոշել կատարել վերապրոֆիլավորում և կազմակերպել ընդունվող պղնձի, պղինձ պարունակող համաձուլվածքների և ալյումինի թափոնների վերամշակում՝ ձուլման եղանակով, ստանալով համապատասխան ձուլակտորներ:

Նախատեսվող վերապրոֆիլավորման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը (ՇՄԱԳՀ) մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի հիման վրա:

Սույն գործունեության ձեռնարկող է հանդիսանում «ՄԵՏԷՔՄԻՄ» ՍՊԸ, հասցե՝ Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովա փողոց 15:

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքները ներկայացված են ստորև.

ՀՀ Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենսգիրքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնա-կառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

ՀՀ Ջրային օրենսգիրք (2002)

Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենսգրքից բխող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Օրենսգիրքը սահմանում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները:

ՀՀ Անտառային օրենսգիրք (2005)

Օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ

հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

«Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» (վերնագիրը փոփ. 13.12.07 N 1451-Ն, 18.03.11 N 238-Ն, խմբ. 27.09.18 N 1029-Ն) ՀՀ Կառավարություն 30 հունվարի 2003 թվականի N 121-Ն որոշում, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում են դրա հետ կապված հարաբերությունները:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք՝ խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

Նախատեսվող գործունեությունը, ըստ սույն օրենքի 12-րդ հոդվածի.

«5) մետաղների արտադրության և վերամշակման բնագավառում՝

գ. գունավոր մետաղների մշակում, ներառյալ լեգիրացումը, արտադրատեսակների ռեկուպերացիան (գտում, ձուլածագործական արտադրություն և այլն)», դասվում է «Ա» կատեգորիայի շարքին:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.) - կարգավորում է.

1) մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը.

2) մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

Գործունեությունը կարգավորվում է նաև այլ իրավական ակտերով, որոնցից հիմնականներն են.

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք

«Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր /ընդունված ՀՀ ԱՆ նախարարի 2002թ. մարտի 6-ի N138 հրամանով/:

«Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման եվ սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց եվ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 հունվարի 2024 թվականի N 32-Ն որոշում:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂԻ ԹՎՈՒՄ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին գյուղերին:

Մարզկենտրոն Արտաշատից գտնվում է 20 կմ դեպի արևմուտք, իսկ Երևանից 17 կմ դեպի հարավ:



Նկար 1. Նկարագրվող տարածքի տեղադիրքի քարտեզ

2.2. Ռելիեֆ և երկրաբանություն


Ուսումնասիրվող տարածքը գտնվում է հանրապետության սեյսմաակտիվ գոտիներից մեկում, Արարատյան դաշտի կենտրոնական մասում:

Ժամանակակից Արարատի գոգավորության կառուցվածքը սկսվել է ձևավորվել վերին էոցեն-օլիգոցենի ժամանակահատվածում և մինչև հիմա ենթարկվում է ճկման: Դրա մասին է վկայում դեպրեսիայի կենտրոնական մասի նեոգենի հասակի գոյացությունների հզորության մեծացումը:

Մասնավորապես լճային նստվածքների հզորությունը այստեղ կազմում է 400մ: Լճային նստվածքները ներկայացված են կոպճա-կավավազա-ավազա-ավազակավային գոյացումներով, ծածակված լճային կավերով, որտեղ հանդիպում են ոսպնյակաձև հրաբխային գոյացումներ:

Ուսումնասիրվող տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևութային համատարած լվացումով մակերևութային տեղումներով:

Ուսումնասիրված տարածքում տեխնածին երևույթները բացակայում են:



Նկար 2. Մակերևույթի ձևագրությունը

2.3. Տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները

Մասիս քաղաքի տարածքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ ռելիեֆային բնույթ:

Ուսումնասիրված տարածքում կարելի է առանձնացնել գեոմորֆոլոգիական մեկ էլեմենտ՝ Այուվիալ պրոյուվիալ ակումուլյատիվ հարթավայր, մակերևույթի թեքությունը չի գերազանցում 10%:

2.4. Տարածքի ինժեներատեխնիկական պայմանները

Լիթոլոգիական տեսակետից Մասիս քաղաքի տարածքում առանձնացրել են հետևյալ երկրաբանական շերտախմբերը՝

1. Ժամանակակից այուվիալ-պրոյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

2. Վերին չորորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Մեծաբեկորային գրունտներով, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

2.5. Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ, քանի որ ստորգետնյա ջրերը, տեղադրված են մակերեսից 5մ-10 մ մակարդակի վրա:

Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտներում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայությամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլյացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

2.6. Կլիմա

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լուսավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները: Տարածքի կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Տեղանքի կլիմայական բնութագիրը ներկայացնելու համար օգտագործվել են տարածաշրջանում գործող Արտաշատ օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալները:

Շրջանի կլիման տաք, խիստ ցամաքային է: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս), չոր: Բարենպաստ են լեռնահովտային քամիները: Ձմեռը ցուրտ, անամպ, անհողմ: Հաստատուն ձնածածկույթ ամեն տարի չէ, որ ձևավորվում է:

Ընդհանուր Արարատյան դաշտի գոգավոր բնույթի հետևանքով ձմռանը դիտվում է ջերմաստիճանի շրջադասություն. դաշտում այն լինում է ավելի ցածր, քան շրջակա նախալեռներում:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.9°C , հունվարինը -3.5°C , ապրիլինը 12.8°C , հուլիսինը 25.5°C , հոկտեմբերինը 13.1°C : Ջերմաստիճանի ամսական ամպլիտուդան 8.6°C է: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -28.9°C , դիտվել է հունվարին, բացարձակ առավելագույնը $+42.6^{\circ}\text{C}$ է՝ դիտվել է օգոստոսին:

Հողի մակերևույթի վրա միջին տարեկան ջերմաստիճանը 9°C է, հունվարինը -5°C , իսկ հուլիսինը 23°C : Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 41 սմ:

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 249 մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է մայիսին՝ 39 մմ, իսկ նվազագույնը օգոստոսին՝ 6 մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 10 սմ:

Աղյուսակ 2.2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Արտաշատ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան °C	Բացարձակ նվազագույն °C	Բացարձակ առավելագույն °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	-3,5	-0,5	6,0	12,8	17,5	21,8	25,5	24,9	20,0	13,1	6,0	-0,4	11,9	-28,9	42,6

Աղյուսակ 2.2.2. Օդի հարաբերական խոնավությունը Արտաշատ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին Տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Արտաշատ	78	73	63	59	59	54	52	52	57	67	75	79	64	78	62	52	35

Աղյուսակ 2.2.3. Մթնոլորտային տեղումները Արտաշատ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	18	18	26	36	39	23	11	6	10	22	23	17	249	102	147
	18	20	32	36	43	34	27	25	28	36	38	22	43		

Աղյուսակ 2.2.4. Չյան ծածկույթ Արտաշատ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, մմ
Արտաշատ	40	36	46	41


Աղյուսակ 2.2.5. Քամու պարամետրերը Արտաշատ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը (հՊա)	Սախներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անոդորի կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը,մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-ձետրվար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)						
1		2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արտաշատ	920,3	Հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0,3	ՀվԱրլ	2,0	ՀվԱրլ	3.1
			1,7	1,7	2,7	3,1	2,4	2,0	2,2	1,7						
		Ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0,6				
			1,7	1,8	2,1	2,8	2,5	2,8	2,8	2,6						
		Հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0,4				
			1,7	1,9	1,7	2,0	2,0	2,0	2,7	2,3						
		Հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0,3				
			1,6	1,5	2,1	2,0	1,5	2,1	2,4	2,0						

2.7. Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադինացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված է ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզում:

Նախագծային աշխատանքների ժամանակ պետք է հաշվի առնվի սեյսմիկ վտանգի գործոնը, որը ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի՝ ՀՀՇՆ 20.04.2020թ. նախատեսվող գործունեության տարածաշրջանը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտու մեջ՝ գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A , ազատ անկման g արագացման մասերով՝ $A_{max}=0.3g$:



Նկար 3. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

2.8. Մթնոլորտային օդ

Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների

դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շաբաթական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օդոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շաբաթական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Մասիս համայնքի տարածքում «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տեղադրված մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներների համար նախատեսված հիմնական անշարժ և շաբաթական կայաններ տեղադրված չեն, և Մասիս քաղաքի օդային ավազանի օդի որակի վերաբերյալ ելակետային տվյալներ պաշտոնական տեղեկագրերում ներկայացված տվյալներ չկան, հետևաբար տեղեկատվությունը վերցվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքից¹:

- ծծմբի երկօքսիդի համար՝ 0.006 մգ/մ խոր.,
- ազոտի օքսիդների համար՝ 0.033 մգ/մ խոր.,
- ածխածնի օքսիդի համար՝ 1.1 մգ/մ խոր.,
- չտարբերակված անօրգանական փոշու համար՝ 0.095 մգ/մ խոր.:

2.9. Ջրային ռեսուրսներ

Տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:


Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ:

ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն

¹ <https://meteomonitoring.am/page/1591>

որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը:

2024 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 35%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 23%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 31%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):




Նկար 4. ՀՀ գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդան ջրավազանային կառավարման տարածքում:

Ըստ «Հիդրոոգերևութաբանության և մոնիթրինգի կենտրոն» ՊՈԱԿ վերջին՝ 2024 թվականի ամփոփագրի՝ Հրազդան գետի ջրի որակը Գեղանիստ գյուղի մոտ (225), Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ (55) և գետաբերանի հատվածներում (56) ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)². Հեռավորությունը «Մետեքսիմ ՍՊԸ» արտադրական տարածքից մինչև Հրազդան գետի մոտակա հատված կազմում է 1040 մ, ընդ որում արանքում առկա են մի քանի այլ արտադրական տարածքներ:

² <https://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Water%20report%202024%20-%20WEB.pdf>



Նկար 5. Հրազդան ջրավազանային կառավարման տարածքի դիտարկվող տարածքին մոտակա մակերևութային ջրերի որակը /2023-2024թ./

2.10. Հողային ռեսուրսներ

Տարածաշրջանի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողածածկեր: Տարածաշրջանի ցածրադիր մասում տարածված են կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս:

Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ տեղ աղակալված հողերը: Տարածաշրջանը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային՝ հնում ոռոգվող հողերով, անտառային բուսականությունը՝ բնահողային ծածկույթին համապատասխան, նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտևորման: Առավել ցածրադիր տեղերում, Արաքսի և նրավ տակների փուխ բերվածքներում ձևավորվել են հումուսով

Կենսաբանական ռեսուրսներ: Կիսաանապատային գոտու կենսառեսուրսներն աչքի չեն ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն կերահանդակները ներկայացված են օշինդրային, օշինդրա-էֆեմերային, օշինդրա-հացազգային, օշինդրա-օշանային և օշանայինբուսական համակեցություններով: Ուտելի և համեմունքային բույսերից կարելի է նշել բոխին, շրեշը, շուշանը, դանձիլը: Եթերայուղատու բույսերից են ուրցը, անթառամը, օշինդրը: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականտային գազերը: Որսի օբյեկտ են համարվում լորը, քարիկաքավը, մի շարք ջրլողոջնուններ /սևփարփար, մեծսուզակ, փոքրսուզակ, կոնչանբադ, մոխրագույն բադ և այլն:

Մարզի բուսականության առավել տարածված տեսակներից են կիսաանապատային, տափաստանային տեսակները, որոնք զբաղեցնում են տարածքի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերը:

Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

Ինչպես վերը նշվել է, գործունեության տարածքը գտնվում արդյունաբերական գոտում, բոլոր կողմերից շրջապատված է այլ արտադրական տարածքներով և այստեղ չկան վայրի բուսականություն, ինչպես նաև վայրի կենդանիների ապրելավայրեր:

2.11.1. Տարածաշրջանի բուսական աշխարհը

Անապատային չորասեր բուսականության բնորոշ բուսատեսակներից են շորան, բալախը, սարսազան որոնք դիմանում են աղակալմանը: Քաղաքի հարավային մասում գերակշռում է հալոֆիտային, հալոքսետոֆիտանապատային բուսականությունը - *Salsola eticoides*, *S. dendroides*, *S. nitraria*, *Haiocnemumstrobilaceum*:

Արևելքում օշինդրա էֆեմերային կիսաանապատային բուսականության գերակշռությամբ - *Artemisia fragrans*, *Kochiaprostrata*, *Capparis herbacea*, *Ceratoides papposa*, *Atraphaxi sspinosa*, *Rhamnus paiiasii*, *Tanacetum argyrophyllum*, *Poa bulbosa*, տեսակներ - *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*:

Կիսաանապատային գոտու համար բնորոշ բուսատեսակներից են օշինդր բուրավետը, Օշան գորշ, Օշան հավամբզանման, գեղածնկիկ մատիտեղանման, լերդախոտ ալեհեր, ավելաբույս գետնատարած:

Հազվագյուտ և անհետացող գիպսոֆիտ անապատային բուսական *Zygophyllumatriplicoides*: ֆորմացիաներ *Cephalorrhynchustakhtadzhianii*, Մարզի էնդեմիկ տեսակներն են կտավատազգիներ (*Linaceae*), մեխակազգիներ (*Caryophyllaceae*):

Մարզի տարածքում հանդիպող և անհետացող բուսական տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 72-Ն որոշումից: ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներն են՝ Կոմուղ Օշեի (*Inula aucheriana*) և Հիրիկ մուսուլմանական (*Iris musulmanica* Fomin):

2.11.2. Տարածաշրջանի կենդանական աշխարհը

Տարածաշրջանը հարուստ է կիսաանապատային գոտուն բնորոշ սողուններով, ինչպիսին են միջերկրածովային կրիան /*Testudograeca*/, բարեկազմ օձ ազուլի մողեսը /*Ophisopselegans*/, Շտրաուխի /*Eremiasstrauchi*/ և Անդրկովկասյան /*E. pleskei*/ մողեսիկները, Անդրկովկասիան թափրային կլորագլուխը /*Phrynocephalushelioscopuspersicus*/, մողեսաօձը /*Malpolonmonspessulannus*/, վզնցավոր /*Eirenis collaris* / և Հայկական /*E. punctatolineatus* / էրենիսները, կարմրափոր սահնօձը կամշահմարը / *Coluberschmidt*/ և կապարագույն սահնօձը /*C. nummifer*/, Անդրկովկասյան գյուրգան /*Viperalebetina*/: Կրծողներից – սովորական /*Microtusarvalis*/ և հասարակական /*M. socialis*/ դաշտամկները, հարավային /*Merionesmeridianus*/, փոքրասիական /*M. blackleri*/ և Վինոգրադովի / *M. vinogradovi* / ավազամկները:

Կատվազգիներից-եղեգնակատուն /*Felischaus*/: Ջրաճահճային էկոհամակարգերում հանդիպում են Կասպիական կրիան/*Mauremiscaspica*/ և լճագորտը/*Ranaridibunda*/:

Նշված համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակ դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտօջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Կենդանիների էնդեմիկ տեսակներն են՝ Կովկասյան փառավոն (*Pharaonus caucasicu*):

ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներն են՝ երկարաոտ սցինկ (*Eumeces schneideri*), ծվվան սագ (*Anser erythropus*), սպտակափոխ սոխակ (*Irania gutturalis*), կրկնակտցար(*Gallinago media*), վան բրինկի նետիկ (*Coenagrion vanbrinkae*):

2.12. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

ՀՀ Արարատի մարզի տարածքում բնության հուշարձանների ցանկը ներկայացվում է ըստ ՀՀ կառավարության 2008 թվականի 14 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման.

Աղյուսակ 2.12.1. ՀՀ Արարատի մարզի բնության հուշարձանների ցանկը

Երկրաբանական	
11. «Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
12. «Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
13. «Խոր հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
14. «Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
15. «Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
16. «Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
17. «Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
18. «Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
19. «Զերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում
20. «Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
Կենսաբանական	
1. «Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

Համաձայն ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշման Արարատի մարզում են գտնվում «Խոսրովի անոռտ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերը, որոնք գտնվում են Մասիս քաղաքից համապատասխանաբար՝ 44,4 կմ դեպի արևելք, 37,5 և 24,8 կմ դեպի հարավ-արևելք հեռավորությունների վրա:

Հարկ է նշել, որ ծրագրի անմիջապես ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

2.13. Պատմության և մշակութային հուշարձաններ

Ստորև ներկայացվում է Մասիս համայնքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը՝ համաձայն ՀՀ կառավարության N 49-Ն որոշման (ընդունված՝ 29.01.2004թ.).

Աղյուսակ 2.13.1. ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը

Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Ծանոթագրություն
Գերեզմանոց	19-20 դդ.	հվ եզրին	Մբ. Աստվածածին եկեղեցուց 200 մ հս-աե
Եկեղեցի Մբ. Աստվածածին	19 դ.	հվ եզրին	Կիսավեր
Բնակատեղի «Օրան-Լոռի»	Ք. ա. 2-1 հազ.	Տաղեր և Դեղն գետերի միացման կետից ամ	«Բուզեր» վայրում
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1983 թ.	գ. մ.	քանդ.՝ Գ. Եփրեմյան
Մատուռ Մբ. Թադևոս Առաքյալ	16 դ.	հվ եզրին	վրկո.՝ 20 դ., Մբ. Աստվածածին եկեղեցուց հս-ամ
Խաչքար	1542 թ.		մատուռի ներսում

Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույցում և մերձակայքում չկան պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ:

2.14. Սոցիալ-տնտեսական պայմանները^{3, 4}

Արարատի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավ-արևմուտքում: Մարզը հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արմավիրի մարզին, հյուսիսից՝ Երևան քաղաքին և Կոտայքի մարզին, արևելքից՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերին, հարավից՝ Ադրբեջանին, իսկ հարավարևմուտքից, պետական սահմանով՝ Թուրքիային:

Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է:

2024թ. մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 9.8 %,
- գյուղատնտեսություն 14.6 %,

³ <https://armstat.am/file/doc/99553333.pdf>

⁴ <https://masiscity.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbeb4291>

- շինարարություն 7.0 %,
- մանրածախ առևտուր 3.5 %,
- ծառայություններ 1.4 %:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որը հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Մարզի տնտեսության զարգացման համար իրենց դերն ունեն նաև զբոսաշրջային ռեսուրսները: Տարեկան հազարավոր զբոսաշրջիկներ այցելում են Խոր Վիրապի վանքային համալիր, Պարույր Սևակի տուն-թանգարան և այլ վայրեր: Էկոզբոսաշրջության զարգացման համար բավարար նախադրյալներ կան Խոսրովի արգելոցում և Դաշտաքարում:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Արարատի մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ երկաթուղին:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծխախոտային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունն այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Մասիս քաղաք

Տարածք՝ 1870,33 հա

Բնակչություն՝ 20,8 հազ. (2024թ. տարեսկզբին)

Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 830 մ բարձրության վրա:

Քաղաքը գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, մարզկենտրոնից 20, իսկ Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը, թղթի և թղթային արտադրատեսակների արտադրությունը և ծխախոտի ապրանքների արտադրությունը:

3. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

3.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և մետաղի ջարդոնի վերամշակում չի իրականացվում:

Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված լրացուցիչ ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնաձին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, կապված նոր գործունեության և նոր աշխատատեղերի ստեղծման հետ:

3.2. Քննարկվող տարբերակներ

Որոշակի հումքատեսակներ տեղում վերամշակելու ու նոր ավելացված արժեք ստեղծելու նպատակով 2024 թվականին ՀՀ կառավարությունը ժամանակավոր սահմանափակում է մտցրել մետաղի ջարդոնի, երկաթի ու պղնձի չմշակված համաձուլվածքի երրորդ երկրներ արտահանման համար⁵:

Համապատասխանաբար անհրաժեշտություն է առաջանում երկրի ներսում զարգացնել սեփական եկրորդական հումքի վերամշակման հնարավորությունները, դրանով ստեղծելով լրացուցիչ արտադրանք և լրացուցիչ աշխատատեղեր:

Ելնելով այս հանգամանքից քննարկվել են հետևյալ տարբերակները.

Ա. Տեղադրվում են երկու գազային վառարան ալյումինի ձուլման և երկու ինդուկցիոն վառարան պղնձի և պղինձ պարունակող թափոնների համար, արտադրված ձուլակտորները իրացվում են տեղական շուկայում:

Այս տարբերակի բացասական կողմերն են.

- Իրականացվում է ջերմային պրոցես, որի արդյունքում առաջանում են մի քանի վնասակար նյութերի արտանետումներ,
- Ջերմային պրոցեսները վտանգ են պարունակում սպասարկող անձնակազմի համար,
- Ձուլարանի արտադրողականությունը սահմանափակվում է ընդունվող թափոնների քանակներով, որոնք կայուն տեմպերով նվազում են,

⁵ <https://hy.armradio.am/archives/621764>

- Չեն արտադրվում վերջանական արտադրատեսակներ, ուստի եկամտաբերությունը բարձր չէ:

Դրական կողմերն են.

- Վառարանները կահավորվում են բազմափուլ մաքրման համակարգով, որը թույլ է տալիս իրականացնել արտանետումների խորը մաքրում,
- Ստեղծվում են նոր աշխատատեղեր,
- Արտադրվում է հումք այլ տեսակի գործունեություն ձեռնարկող կազմակերպությունների համար:

Բ. Կառուցվում է նոր գործարան, որում կվերամշակվեն/կօգտահանվոն տարբեր տեսակի մարկոցներ, այդ թվում՝ կապարաթթվային, հիմնային, լիտիումային, փոքր կենցաղային և այլն:

Երկրորդ տարբերակի դրական կողմերն են.

- Բարձր շահութաբերությունը,
- Հումքի աճող քանակները,
- ՀՀ տարածքում առաջացող վտանգավոր թափոնների վնասազերծումը:

Տարբերակի բացասական կողմերն են.

Ներդրման համար պահանջվող զգալի ֆինանսավոնում,

Բարդ տեխնոլոգիական սխեմաներ, որոնք պահանջում բարձր որակավորում ունեցող անձնակազմ,

Վերամշակման ընթացքում հնարավոր բնապահպանական ռիսկեր, որոնցից են

- Թթուների վնասազերծման հանգույցի կառուցում և շահագործում,
- Ծանր մետաղների առկայությունը լուծույթներում, որը պահանջում է դրանց գտում, նստվածքի վերամշակման բարդ գործընթաց և այս ոլորտում մասնագետների պակաս:

Վերլուծելով դրական և բացասական կողմերը, այդ թվում

- բնապահպանական ռիսկերը,
- անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթաթման դժվարությունները,

ընկերությունը ընտրել է առաջին տարբերակը:

3.3. Ընտրված տարբերակի հիմնավորումը

Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պղինձն ամենամեծ պահանջարկ ունեցող գունավոր մետաղներից մեկն է, երկրորդ տեղը զբաղեցնում է ալյումինը:

Ըստ Լոնդոնի մետաղների բորսայի (LME) 2023 և 2024 թվականի առևտրային նստաշրջանի արդյունքում գունավոր մետաղների համար սահմանվել են հետևյալ գները.

Անվանում	Գունավոր մետաղների գինը, ԱՄՆ դոլար/1տ	
	21.06.2023թ.	15.03.2024թ.
Ալյումին	2 233.00	2 255.00
Պղինձ	7 890.00	8 890.00

Ըստ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տվյալների, շուկայում գունավոր մետաղների նկատմամբ չբավարարված շատ մեծ պահանջարկ կա:

Այլ հավասար պայմաններում նման պակասուրդի առկայությունը և աճը թույլ են տալիս կանխատեսել երկար ժամանակահատվածում գունավոր մետաղների գնի աճ, հետևաբար՝ ոլորտի կայուն զարգացում⁶:

Քանի որ ՀՀ ալումինի ստացման համար համապատասխան որակի կամ հասանելիության հումք չկա և նախկինում էլ Քանաքեռի ալումինի գործարանը աշխատում էր ներմուծվող հումքով, իսկ ՀՀ միակ սև պղինձ արտադրող Ալավերդու պղնձաձուլային գործարանը 2018 թվականից չի աշխատում, ուստի անհրաժեշտություն է առաջանում տեսակավորված ջարդոններից ստանալ շուկայում մեծ պահանջարկ ունեցող մետաղական ալյումին և պղինձ, ինչպես նաև պղնձի հիման վրա համաձուլվածքներ:

Հենց այս գործունեության տեսակն է ընտրել «ՄԵՏԷՔՄԻՄ» ՍՊ ընկերությունը:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Ընդհանուր տեղեկատվություն

«ՄԵՏԷՔՄԻՄ» ՍՊ ընկերությունն իրականացնում է տարատեսակ մետաղի ջարդոնի ընդունում, տեսակավորում և վաճառք:

Մետաղի ջարդոնի ընդունման, տեսակավորման և պահման համար ընկերությունը, համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության

⁶ file:///C:/Users/user/Downloads/270045___.pdf

լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշմամբ հաստատված կարգով ՀՀ կառավարության 08.09.2016թ. N933-Ա որոշման հիման վրա շրջակա միջավայրի նախարարությունից 16.09.2016թ.–ին, ստացել է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ընկերությունը նշված աշխատանքները կազմակերպվում է վարձակալությամբ օգտագործվող տարածքում, որը գտնվում է արդյունաբերական գոտում:

Գունավոր մետաղների ձուլման արտադրամասը տեղակայված է գոյություն ունեցող շինությունում, որի մակերեսը կազմում է 996 մ²: Արտադրամասի շահագործման համար առկա են բոլոր ենթակառուցվածքները և մոտեցող ավտոճանապարհը: Ընկերությունն ունի մետաղաձուլման ոլորտի մասնագետներ և անհրաժեշտ փորձ:

Տարածքը վաղուց յուրացված է արտադրական օբյեկտների տակ:



Նկար 7. Իրադրային քարտեզ-սխեմա

4.2. Նախատեսվող գործունեության նկարագիրը

4.2.1. Մետաղի ջարդոնի ընդունման, տեսակավորման և պահեստավորման տեղամասի նկարագիրը

Ընկերությունն իրականացնում է մետաղների ջարդոնի ընդունում, տեսակավորում և պահեստավորում՝ դրա համար նախատեսված պինդ, անջրաթափանց հատակ ունեցող հրապարակում:

Ընդամենը տարեկան ընդունվում 1870 - 2 720 տ գունավոր և սև մետաղների ջարդոն, այդ թվում.

- չտեսակավորված ալյումինի ջարդոն՝ 900 – 1200 տ,
- չտեսակավորված պղնձի ջարդոն՝ 150 – 170 տ,
- չտեսակավորված արույրի ջարդոն՝ 20 – 30 տ:
- չտեսակավորված պողպատի ջարդոն պարունակող կոնստրուկցիաների թափոններ՝ 800 - 1320 տ:

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» Ա 342-Ն և ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» 430-Ն հրամանների չտեսակավորված պղնձի ջարդոնը դասակարգվում է 3-րդ դասի վտանգավորության դասի, ծածկագիրը՝ 3531030101013, չտեսակավորված ալյումինի ջարդոնը պատկանում է վտանգավորության 5-րդ դասի, ծածկագիրը՝ 3531010101995, չտեսակավորված արույրի ջարդոնը նույնպես պատկանում է վտանգավորության 5-րդ դասի, ծածկագիրը՝ 3541030101995, չտեսակավորված պողպատի ջարդոն՝ վտանգավորության 5-րդ դաս, ծածկագիր՝ 3512010101995:

Ջարդոնն ընդունելուց հետո այն անցնում է տեսակավորման փուլ, որի ժամանակ ընդհանուր ջարդոնից առանձնացվում է գունավոր մետաղների (ալյումին, պղինձ և արույր) ջարդոնը, ինչն էլ հանդիսանում է նախատեսվող ձուլման համար հիմնական հումքը: Գունավոր մետաղների տեսակավորման և պողպատյա կոնստրուկցիաների մասնատման արդյունքում առաջանում է չտեսակավորված պողպատի ջարդոն, որը կտրամադրվի համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին: Մասնավորապես նախատեսվում է պայմանագիր կնքել «ԱՄԿԵ գրուպ» ԲԲԸ հետ:

Նախատեսվում է գունավոր մետաղների ջարդոնից տարեկան ստանալ 980 տոննա ալյումինի, պղինձի և դրա համաձուլվածքների ձուլակտորներ:

Գունավոր մետաղների և պողպատի թափոնները հրդեհապայթյունավտանգ չեն:

Թափոնների ընդունման և պահեստավորման տեղամասում աշխատանքներն իրականացվում են տարեկան 340 օր, օրը մեկ՝ 8-ժամյա մեկ հերթափոխով:

4.2.2. Նախատեսվող ձուլման տեղամասի նկարագիրը

Ձուլման տեղամասում նախատեսվում է տեղադրել 4 հատ վառարան, որոնցից երկուսը գազով աշխատող, երկուսն՝ ինդուկցիոն:

Նախատեսվում է ստանալ հետևյալ տեսակի ձուլվածքները

- Ալյումինից,
- Պղնձից և պղնձի հիման վրա համաձուլվածքներ, մասնավորապես արույր:

Ձուլման տեղամասը կաշխատի տարեկան 340 օր, օրը 16 ժամ, երկու՝ 8-ժամյա հերթափոխով: Արտադրամասի նախատեսվող արտադրողականությունը ներկայացված է 4.1. աղյուսակում Աղյուսակ 4.1.

Արտադրանք	Արտադրողականություն		
	տ/հերթափոխ	տ/օր	տ/տարի
Ալյումին	2,06	4,11	800
Պղինձ և դրա համաձուլվածքներ	0,83	1,68	180

4.3. Տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը

Ալյումինի, պղնձի և արույրի ջարդոնները նախապես տեսակավորվում են ըստ կազմի, խոշոր եզրաչափեր ունեցող կտորները կտրատվում են մեխանիկական եղանակով, այնուհետև մամլվում՝ ստանալով խորանարդիկներ, որոնք համապատասխանում են վառարանների բեռնման անցքին:

Տեսակավորված և առանձնացված ջարդոնը կշռվում, տեխսփոխվում է ձուլման արտադրամաս և պահեստավորվում:

Ալյումինի և պղնձի հալման համար նախատեսված են առանձին վառարաններ և ձուլվածքի մետաղակաղապարներ:

4.3.1. Ալյումին ջարդոնի հալում

Ալյումինի ջարդոնի հալումն իրականացվում է թվով երկու ստացիոնար (վառարանները ֆիքսված են, բեռնվում են ձեռքով կամ մեխանիկորեն) անդրադարձող վառարաններում (Отражательные печи), որոնք տաքացվում են բնական գազով, ունեն էլեկտրոնային կառավարման և հսկման, ինչպես նաև գազի ճնշման տատանումների պաշտպանության համակարգ:

Վառարանները ընդհանուր բնութագիրը ներկայացված է ստորև.

Բնութագիր	Տիպիկ արժեքներ
Վառելանյութը	Բնական գազ
Վառարանի աշխատանքը	Էլեկտրական հսկում
Տարողությունը	3 տոննա
Առավելագույն տարողությունը	3,5 տոննա
Աշխատանքային ջերմաստիճանը	720-750°C
Առավելագույն ջերմաստիճանը	≤ 950°C
Այլումինի հալույթի առավելագույն խորությունը	50 սմ
Հալման տևողությունը	8-10 ժամ
Վառարանների տեսակը	Ստացիոնար
Եզրաչապերը	

Անդրադարձող վառարանները այլումինի հալեցման համար հատուկ տիպի արդյունաբերական վառարաններ են, որոնք թույլ են տալիս հալեցնել այլումինը առանց նրա ուղղակի շփման կրակի հետ, ինչը կանխում է մետաղի աղտոտումը այրման արգասիքներով և ապահովում է հավասարաչափ տաքացում:

Անդրադարձող վառարաններն ի տարբերություն այլ տիպի վառարանների, ձուլվածքի տաքացման համար օգտագործվում է վառարանների պատերի ֆիզիկական ջերմությունը՝ պատերն անընդհատ տաքացվում են գազայրիչներից տրվող բոցով: Հալվող մետաղն աստիճանաբար հոսում և կուտակվում է վառարանի հատակին:

Վառարանների պատյանը, հատակը, պատերը և կառուցվածքի տարրերը պատրաստված են պրոֆիլավորված պողպատե արմատուրայից: Հալման գոտին ջերմամեկուսացված է հրահետտ աղյուսներով և այլումասիլիկատային թելքով:

Առաջին վառարանում տեղի է ունենում ջարդոնի նախնական հալում, որտեղ այլ խարնուրդները և մետաղները անջատվում է այլումինից:

Այնուհետև այլումինի համաձուլվածքի խորանարդիկները տեխափոխվում են երկրորդ վառարան, որից հետո ստանում են սպառման համար անհրաժեշտ տարբեր մակնիշի այլումինի ձուլակտորներ:

Գործընթացի նկարագրություն

1. Բեռնումն իրականացվում է մեխանիկորեն կամ ձեռքով՝ ըստ ծավալի: Անհրաժեշտ է բեռնումն իրականացնել համաչափ շերտերով՝ օդի լավ շրջանառության համար:
2. Բնական գազը մուտք է գործում վառարանի այրիչներ:
3. Պատերն ու կամարը տաքանում են և անդրադարձնում են ջերմությունը մետաղի վրա:
4. Ջարդոնային այլումինը դանդաղ հալվում է՝ առանց կրակի հետ ուղիղ շփման:
5. Վառարաններն ունեն թեքություն դեպի հալոցքի թափման ուղիներ:

6. Հալումից հետո, վերահսկիչը բացում է փականը կամ դուրս է բերում արգելքը ինքնահոս ուղուց:

7. Այլումինը հոսում է նախապես տաքացված խողովակի միջով (մինչև $\sim 500^{\circ}\text{C}$):

8. Ձուլակաղապարները պետք է լինեն պատրաստ՝ նախապես տաքացրած և յուղված:

9. Հալույթը լցվում է փոխակրիչների վրա տեղադրված մետաղական ձուլակաղապարների մեջ:

10. Հալույթով լցված ձուլակաղապարներն ըստ տեղափոխման հովացվում են օդային օդափոխիչով ու փոխակրիչի վերջնամասում հալույթը պնդանում և սառչում է:

11. Պատրաստի ձուլակտորները հանվում են կաղապարներից և պահեստավորում՝ ըստ մանիշի:

12. Ցիկլի ավարտից հետո փակվում է գազի մատակարարումը, վառարանը սառեցվում է ($\sim 200^{\circ}\text{C}$ -ից ցածր), ապա մաքրվում է մնացորդներից:

13. Անհրաժեշտ է ստուգել արտահոսքի ուղին՝ չի եղել արդյո՞ք մնացորդային կուտակում:

Վառարանների առավելությունները

- մաքուր հալոցք՝ մետաղը չի շփվում կրակի հետ:
- հավասարաչափ տաքացում՝ նվազեցնում է գերտաքացման և օքսիդացման վտանգը:
- հնարավոր է հալեցնել նաև ալյումինե ջարդոն՝ նույնիսկ ներկված կամ աղտոտված:
- հեշտ սպասարկում:

Ընտրված գազայրիչների առավելությունները.

- բոցի բարձր հզորություն,
- կայուն այրում,
- էներգիայի խնայողություն,
- շահագործման հարմարավետություն,
- խափանումների ցածր տոկոս,
- բարձր ջերմային արդյունավետություն,
- լիայրում,
- օդի բաշխման ինքնակառավարում,
- շահագործման բարձր անվտանգություն:

Անվտանգության կանոններ

Մինչև հալումը

Ստուգել գազի և օդի մատակարարման խողովակները:

Վստահ լինել, որ կառավարման համակարգը աշխատում է ճիշտ:

Զբեռնել խոնավ կամ յուղոտ ջարդոն:

Հալման ժամանակ

Կրել պաշտպանիչ հանդերձանք (քաղապար, ձեռնոց, դիմակ):

Մոտ չկանգնել բաց հոսքի ուղուն:

Պարբերաբար վերահսկել ջերմաստիճանը և հնարավոր արտահոսքները:

Արտահոսքի ժամանակ

Հոսքի ուղին բացել միայն մետաղի պատրաստ լինելուց հետո:

Մետաղը պետք է հոսի ուղղակի ընդունիչ տարան՝ առանց լճանալու:

Խուսափել բաց կրակի մոտ լինելուց՝ հոսքի ժամանակ:

Սպասարկման ժամանակ

Շաբաթական մեկ անգամ՝ այրիչների, սենսորների մաքրում:

Ամսական մեկ անգամ՝ կառավարման համակարգի տրամաչափում:


Տարեկան՝ ջերմամեկուսիչ նյութի գնում:

4.3.2. Պղնձի և դրա համաձուլվածքների ջարդոնի վերահսկում

Պղնձի ջարդոնի հալումն իրականացվում է թվով երկու ինդուկցիոն վառարաններում, որոնք աշխատում են էլեկտրաէներգիայով, ունեն էլեկտրոնային կառավարման և հսկման համակարգ:

Ինդուկցիոն վառարանը (անգլ.՝ *induction furnace*) էլեկտրական ջեռուցման սարք է, որը հիմնված է էլեկտրամագնիսական ինդուկցիայի սկզբունքի վրա:

Այն լայնորեն օգտագործվում է մետաղների հալման, խառնուրդների պատրաստման, ինչպես նաև ջերմամշակման աշխատանքներում:



Նկար 9. Ինդուկցիոն վառարանի կտրվածքի սխեմա

1. ինդուկտոր, 2. Տիգել, 3. Վառարանի շրջման մեխանիզմ, 4. Տարա, 5. կափարիչ

Ինդուկցիոն վառարանում մետաղական ջարդոնը տեղադրվում է պղնձե պարույրով շրջապատված շամանային կաթսայի (կրուցիբլի) մեջ: Երբ այդ պարույրում հոսանք է անցնում (բարձր հաճախականությամբ), առաջանում է փոփոխական մագնիսական դաշտ, որը մետաղի ներսում առաջացնում է ինդուկցիոն հոսանքներ: Այս հոսանքները տաքացնում են մետաղը՝ իր ներքին դիմադրության հաշվին:

Ջերմացումը տեղի է ունենում **անուղղակիորեն**՝ առանց այրման գործընթացի:

Շատ արդյունավետ է, քանի որ ջերմությունն առաջանում է հենց մետաղի ներսում:

Վառարանների ընդհանուր բնութագիրը ներկայացված է ստորև.

Բնութագիր	Տիպիկ արժեքներ
Հզորությունը	400 կՎտ
Հաճախականությունը	50 Հց
Վառարանի աշխատանոթ	Էլեկտրական հսկում
Առավելագույն տարողությունը	1,0 տոննա
Առավելագույն ջերմաստիճանը	1350°C
Հալման արագությունը	0,67 տ/ժամ
Հալման տևողությունը	50-55 րոպե
Հովացման համակարգի ջրապահանջը	26 մ³/ժամ
Եզրաչապերը	

Ինդուկցիոն վառարանների հովացումն իրականացվում է ջրային հովացման շրջանառու համակարգով:

Ինդուկցիոն վառարանների հովացման համակարգը (cooling system) չափազանց կարևոր է սարքի անվտանգ, արդյունավետ և անխափան աշխատանքի համար: Այն ծառայում է հիմնականում **ինդուկցիոն պարույրի, կառավարման բլոկի**, ինչպես նաև **մեկուսիչ շերտերի** գերտաքացումից պաշտպանելու նպատակով:

Հովացման համակարգի կառուցվածքը.

- Շրջանակող ջրատար խողովակներ
- Ջրի պոմպ (շրջանառման համար)
- Ջերմաստիճանի սենսորներ և վահանակներ
- Ջրի հովացման ջրավազան

Գործընթաց.

- Ջուրը շրջանառվում է փակ ցիկլով ինդուկցիոն պարույրի շուրջ՝ կլանելով դրա գերտաքացած ջերմությունը:
- Ջուրը պտտվում է փակ ցիկլով, չունի շփում արտաքին միջավայրի հետ:
- Ջուրը սառչում է հովացման ջրավազանում:
- Սառեցված ջուրը պոմպի միջոցով վերադառնում է համակարգ:

Հովացման համակարգի անվտանգության կանոններ

- Ջրի պակասը կամ խողովակի խցանումը կարող են հանգեցնել պարույրի այրմանը:
- Անհրաժեշտ է հովացման համակարգի մշտական մոնիթորինգ:
- Օգտագործվում են **ձայնային/լուսային ազդանշանային համակարգեր**՝ բարձր ջերմաստիճանի դեպքում:

Ջուլակաղապարների յուղման համար օգտագործվելու են իրենց հատկանիշները կորցրած աշխատած յուղեր:


Օժանդակ ծառայություններից արտադրամասում գործում է փորձարկման լաբորատորիան և մեխանիկական տեղամասը:

Աշխատողների թվաքանակը նախատեսված է 34 մարդ, որից 6-ը վարչական աշխատողներ են և ԻՏԱ:

